մի 'ի քարընկէց մեքենայիցն սպան զնա։ Ամբարձաւ Գայիոս 'ի գահ կայսերութեան Հռովմայեցւոց, զանձն աստուածացոյց, եւ առաքեաց զպատկեր իւր յԵրուսաղէմ դնել 'ի Տաճարին (40)։ Իսկ Հրէայք, որ սաստիկ ատելութեամբ էին ընդ Հռովմայեցիս, և ամբարտաւանելով իմն պարծէին յազգն և 'ի Տաճարն իւրեանց, յանձն առին առհասարակ մեռանիլ, քան տեսանել զանարգանս օրինաց։ Միստ էր ըմբոստութիւն Հրէից ընդդէմ հրամանի կայսեր, այլ կանխահաս մահ նորին զերծոյց զնոսա 'ի մօտալուտ վտանգէ։ Եկաց թագաւոր Կղոդիոս, շնորհեաց Ագրիպպայ զթագաւորութիւնն Հրէաստանի, զոր հայրենեօք ունէր։ Հասք տէրութեանն յորդեաց առաւել քան զկարծիս իւր, և այնչափ մեծածախ հիմնարկեաց զպարիսպն Երուսաղէմի, զոր եթէ աւարտեալ էր, ընդունայն լինէր պաշարումն Հռովմայեցւոց եւ մարտնչիլ ընդդէմ Երուսաղէմի, այլ նախ քան զկատարումն գործոյն մեռաւ 'ի Կեսարիա Պաղեստինացւոց։

Ապա եկին իբրեւ գաւառապետք մի զկնի միոյ Փեստոս, Աղէքսանդրոս և Կամանոս։ Սա գումարեաց զզօրս 'ի կամարակապն Տաճարին սակս բառնալոյ զխռովութիւնն 'ի մէջ պահապան զօրաց և ժողովրդոց։ այլ 'ի խուճապել և 'ի տագնապել Հրէից 'ի զինուորաց սուսերամերկ դիմելոց, կոխեցան 'ի միմեանց 'ի մուտս դրան 'ի խառանդ, եւ սատակեցան արք իբրեւ 10,000, և տօնք նոցա դարձան 'ի սուգ տրտմութեան։

Յետ սորա առաքեցաւ Փելիքս, որ առաքեաց զնեղիազար աւազակապետն կապանօք 'ի Հռոմ և զընկերս նորա 'ի խաչ հան։ ցրուեաց զխումբս աւազակաց, որք կոչէին Սիկարիանք։ Հալածական արար և զայրն Եգիպտացի, որ մարգարէ զինքն անուանէր, եւ զհետեւողս նորա իբրեւ արք 3 բիւրք։ Եւ յետ սոցա յարեան այլ գունդք աւազակաց, որք սպանութեամբ և աւարառութեամբ սպառնային հնազանդելոցն Հռոմայեցւոց (55)։ Ապա առաքեցաւ 'ի Ներոնէ կայսերէ Փեստոս, որ խաղաղացոյց զերկիրն։ Յետ Ալիիանոսի յաջորդեաց Գեսսիոս Փլորոս, այր ժանտ և ընչաքաղց, որ անցոյց զանցոյց զառաջնովքն ժլատութեամբ և անգթութեամբ, պաշտպան էր աւազակաց՝ առնուլ ըզ-